Փարկինգ Սիթի Սերվիս ՓԲԸ

PARKING CITY SERVICE

Parking City Service CJSC

ՀՀ, ք. Երևան, Ադոնց 2
Հեռ. (010) 20-36-37, (010) 20-36-38
Էլ. Փոստ info@parkingcs.am,

2 Adonts str., Yerevan, Armenia
Tel. (010) 20-36-37, (010) 20-36-38
Email: info@parkingcs.am

25.11.2013թ.

«Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն» ՀԿ-ի նախագահ տիկին Շուշան Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 21.11.2013թ. թիվ 211-ի 6 հարցմանը[1]՝ հայտնում ենք, որ «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ չի հանդիսանում տեղեկատվություն տնօրինող և այդ օրենքն Ընկերության վրա չի տարածվում, ուստի՝ Ձեր կողմից հայցվող տեղետավտությունը չի կարող տրամադրվել: Ավելին՝ Ընկերությունը պարտավորություն չունի Ձեզ տրամադրելու որևէ տեղեկատվություն՝ ինչի վերաբերյալ արդեն իսկ հայտնել ենք:

Ինչ վերաբերում է Ձեր կողմից վկայակոչած ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածներին՝ այն, կարծում ենք, տեղին չէ, քանի որ այն կարգավորում է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու ֆիզիկական (իրավաբանական) անձ իրավահարաբերությունները, և ֆիզիկական (իրավաբանական) անձանց գործողություններով կամ անգործությամբ չի կարող խախտվել սահմանադրական իրավունքները:

Հարգանքներով՝

«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
Տնօրեն՝ Վազգեն Հարությունյան

[1] Ընկերությունը հարցումն ստացել է 25.11.2013թ.: